

Աշխարհագրություն

УДК 551.58

ՀՀ ՍԱՀՍԱՆԱՄԵՐՉ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ
ՇԱՐԺՆԹԱՑԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Վ. Ա. ՊՈՏՈՍՅԱՆ*

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան

ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ժամանակակից պայմաններում և ռազմավարական նկատառումներից ելնելով առանձնակի կարևորություն և գործնական մեծ նշանակություն ունի սահմանամերձ տարածքների սոցիալ-տնտեսական զարգացումը և երկրի պաշտպանումնականության ամրապնդումը: Այդ իմաստով խիստ արդիական է սահմանամերձ տարածքներում տարաբնակեցման շարժընթացի վերլուծությունն, առկա միտումների և հիմնախնդիրների բացահայտումը: Հոդվածում վիճակագրական տվյալների վերլուծության հիման վրա բացահայտված է ՀՀ սահմանամերձ տարածքներում վերջին երեք տասնամյակների ընթացքում տարաբնակեցման (բնակչության և բնակավայրերի) շարժընթացի միտումները և վերջինիս հետ կապված հիմնախնդիրները:

Keywords: frontier area, population, settlements, settlement, dynamics, problems.

Ըստ “Հայաստանի Հանրապետության պետական սահմանի մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ ՀՀ պետական սահմանագծից երկրի խորքը մինչև 5 կմ լայնությամբ ծավալվող տարածքը կոչվում է սահմանային գոտի: Պետական սահմանին հարող մինչև 1 կմ լայնությամբ սահմանային գոտու մասը, կոչվում է սահմանամերձ շերտ: Սահմանամերձ շերտը զբաղեցնում է 1431 կմ² (ՀՀ տարածքի 4,8%-ը), իսկ սահմանային գոտին՝ 7155 կմ² (ՀՀ տարածքի 24%-ը) [1]: ՀՀ-ում սահմանային գոտին տարածվում է ՀՀ 10 մարզերից 9-ի տարածքով, բացառություն է կազմում կենտրոնական դիրք զբաղեցնող Կոտայքի մարզը:

Սահմանամերձ գոտում տեղադրված են ՀՀ բնակավայրերի ընդհանուր թվի 20%-ը՝ 9 քաղաքային (ՀՀ քաղաքների թվի 18,4%-ը) և 173 գյուղական համայնք (200 բնակավայր, հանրապետության գյուղական բնակավայրերի թվաքանակի 19%-ը) [2]: 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ սահմանամերձ գոտու բնակչության թիվը կազմել է 247,8 հազար մարդ [3]՝ (ՀՀ բնակչության 8,3 կամ սահմանամերձ 9 մարզերի բնակչության 14,8%-ը, ՀՀ քաղաքային բնակչության՝ 5,7%-ը, գյուղական բնակչության՝ 12,6%-ը):

Արմավիրի և Արարատի մարզերի սահմանային գոտու 60–80%-ը քաղաքաշինորեն և տնտեսապես ինտենսիվ յուրացված է: Սյունիքի մարզի սահմանային տարաբնակեցված տարածքի մոտ 20%-ն է ինտենսիվ

* E-mail: vahan.potosyan.93@mail.ru

բնակեցված, մյուս մարզերի սահմանային գոտիների հիմնականում թույլ են յուրացված: Տարաբնակեցման համար անբարեհաջող տարածքերը մեծ տեսակարար կշիռ ունեն Սյունիքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերում [1]:

ՀՀ կառավարության 17.11.1998 թ.-ի “Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին” թիվ 173 որոշմամբ [2] սահմանամերձ համայնքների (բնակավայրերի) ցանկերը հաստատելիս հիմք են ընդունվել հետևյալ չափանիշները՝

ա) Ադրբեջանի Հանրապետության հետ պետական սահմանի սահմանային գոտում գտնվելը;

բ) Հայաստանի Հանրապետության սահմանային շերտում գտնվելը;

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 1993–1995 թ.-ի որոշումներով հաստատված ցանկերում ընդգրկված լինելը:

Աղյուսակ 1

ՀՀ սահմանամերձ բնակավայրերի մշտական բնակչության թվի շարժընթացը (1988–2016 թթ.) [3–6]

Մարզեր	Բնակչության և բնակավայրերի թիվն ըստ տարեթվերի							
	1988 թ.		2001 թ.		2011 թ.		2016 թ.	
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ
Արագածոտն	2	825	2	344	2	282	2	264
Արարատ	9	10266	9	10211	9	10474	9	12080
Արմավիր	8	9551	8	11602	8	10799	8	13577
Գեղարքունիք	23	47443	22	29350	22	28094	22	28056
Լոռի	5	2753	5	1172	5	854	5	983
Շիրակ	16	9009	16	8617	18	7572	18	10106
Սյունիք	76	110533	76	113645	76	105038	77	103302
Տավուշ	47	76187	47	77733	47	70617	47	70713
Վայոց ձոր	13	9654	14	8748	14	7920	14	8725
Ընդամենը ՀՀ-ում	199	276221	199	261422	201	241650	202	247806

ա՝ բնակավայրերի թիվը; բ՝ բնակչության թվաքանակը:

Ըստ՝ ՀՀ սահմանամերձ համայնքների (բնակավայրերի) բնակչության թվաքանակի շարժընթացի վերլուծության վերջին երեք տասնամյակի ընթացքում (1988–2016 թթ.) նշված տարածքներում մշտական բնակչության բացարձակ թիվը նվազել է ավելի քան 28 հազարով կամ 10,3%-ով (աղյ. 1): Միայն վերջին երկու մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում (2001–2011թթ.) այն նվազել է ավելի քան 19 հազարով (7,6%-ով), իսկ առկա բնակչության տվյալներով՝ ավելի քան 21,5 հազարով (9,1%-ով) (աղյ. 2): Բացառությամբ Արարատի, Արմավիրի և Շիրակի, սահմանամերձ մնացած մարզերում 1988–2016 թթ. ընթացքում տեղի է ունեցել մշտական բնակչության բացարձակ թվի նվազում: Ադրբեջանի հետ սահմանամերձ համարվող Գեղարքունիքի, Սյունիքի, Տավուշի և Վայոց ձորի մարզերում միասին վերցրած, որոնց բաժին է ընկնում ՀՀ սահմանամերձ բնակավայրերի մոտ 80%-ը, այդ թիվը նվազել է ավելի քան 33 հազարով կամ 13,5%-ով (աղյ. 1): Այդ մարզերի սահմանամերձ 159 բնակավայրերում 1988 թ.-ին ապրում էր հանարապետության սահմանամերձ տարածքների բնակչության ավելի քան 88%-ը, իսկ 2016 թ.-ին՝ 85%-ը:

Առավել նկատելի է Գեղարքունիքի մարզի սահմանամերձ բնակավայրերի բնակչության թվաքանակի նվազումը: Այստեղ 1988 թ.-ին ապրում էր

ՀՀ սահմանամերձ համայնքների (բնակավայրերի) բնակչության 17,2%-ը, իսկ 2016 թ.-ին՝ ընդամենը 11,3%-ը:

ՀՀ-ում սահմանամերձ գոտում բնակավայրերի թվով և բնակչության քանակով առանձնանում է Սյունիքի մարզը, որին 2016 թ.-ին բաժին էր ընկնում ՀՀ սահմանամերձ բնակավայրերի 38,1 և բնակչության 41,7%-ը: 1988 թ.-ի համեմատ դրանց բացարձակ թիվը նվազել է ավելի քան 7200-ով կամ 6,5%-ով (աղյ. 1):

Այս ցուցանիշով հանրապետությունում երկրորդը Տավուշի մարզն է: Թեև ուսումնասիրված ժամանակահատվածում մարզի սահմանամերձ բնակավայրերի բնակչության տեսակարար կշիռն ավելացել է 0,9 տոկոսային կետով (27,6-ից՝ 28,5%), սակայն բնակչության բացարձակ թիվը նույն ժամանակահատվածում նվազել է 5500-ով կամ 7,2%-ով:

Նվազել է նաև Ադրբեջանի հետ սահմանամերձ 14 բնակավայր ունեցող Վայոց ձորի մարզի սահմանամերձ գոտու բնակչության բացարձակ թիվը (930-ով կամ 9,6%-ով), իսկ մարզի Ամաղու և Կապույտ սահմանամերձ բնակավայրերը մշտական բնակչություն չունեն:

Ադրբեջանի հետ սահմանամերձ բնակավայրեր ունեցող միակ մարզը, որտեղ 1988 թ.-ից հետո մշտական բնակչության թվաքանակի աճ է գրանցվել, Արարատն է: Այստեղ 1988 թ.-ի համեմատ 2016 թ.-ին սահմանամերձ բնակավայրերի բնակչության թվաքանակն ավելացել է ավելի քան 1800-ով կամ 17,7%-ով: Հարկ է նշել, որ սահմանամերձ՝ ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Երասխ գյուղում, այդ ընթացքում մշտական բնակչության թիվը ոչ միայն չի ավելացել, այլ նվազել է 101-ով: Ընդ որում, վերջինիս առկա բնակչության թիվը 2001 թ. մարդահամարի ժամանակ կազմել է 713 մարդ, իսկ 2011 թ.-ին՝ ընդամենը 590 մարդ [5, 6]:

Աղյուսակ 2

ՀՀ սահմանամերձ բնակավայրերի առկա թվի շարժընթացն [5, 6]

Մարզեր	Բնակչության և բնակավայրերի թիվն ըստ տարեթվերի			
	2001 թ.		2011 թ.	
	ա	բ	ա	բ
Արագածոտն	2	299	2	261
Արարատ	9	9731	9	9719
Արմավիր	8	11221	8	10603
Գեղարքունիք	22	27625	22	27133
Լոռի	5	1066	5	784
Շիրակ	16	7894	18	6775
Սյունիք	76	97799	75	90333
Տավուշ	47	73047	47	63438
Վայոց ձոր	14	8465	14	7325
Ընդամենը ՀՀ-ում	199	237147	200	216371

ա՝ բնակավայրերի թիվը; բ՝ բնակչության թվաքանակը:

Թուրքիայի հետ սահմանամերձ գոտում գտնվում են Արագածոտնի, Շիրակի և Արմավիրի մարզերի թվով 30 բնակավայր: Ի տարբերություն Ադրբեջանի հետ սահմանամերձ մարզերի, այստեղ, բացի Արագածոտնից (2 սահմանամերձ բնակավայր), Արմավիրի և Շիրակի մարզերում, դիտարկված

ժամանակահատվածում, տեղի է ունեցել բնակչության բացարձակ թվի ավելացում (Արմավիրում՝ 42,2, Շիրակում՝ 12,2%-ով): Ընդ որում Շիրակի մարզի սահմանամերձ Գետաշեն, Ջարիշատ, Ջորակերտ և Անիպենզա բնակավայրերի բնակչության թիվը նվազել է, մնացածներում՝ ավելացել: Իսկ Արմավիրի մարզի սահմանամերձ բոլոր 8 բնակավայրում էլ դիտվել է բնակչության բացարձակ թվի ավելացում:

Վրաստանի հետ սահմանամերձ գոտին տարածվում է Լոռու մարզում (5 գյուղ), որոնց 2016 թ.-ին բաժին էր ընկնում ՀՀ-ում նմանատիպ բնակավայրերի բնակչության ընդամենը 0,4%-ը: Այստեղ 1988 թ.-ից բնակչության ընդհանուր թիվը նվազել է 2,8 անգամ (աղյ. 1):

ՀՀ սահմանամերձ գոտու բնակավայրերից 9-ը քաղաքներ են, որոնցից 5-ը՝ Սյունիքում, 2-ական՝ Գեղարքունիքում և Տավուշում: Այստեղ 1988 թ.-ին բնակվում էր գոտու բնակչության 43,2%, իսկ 2016 թ.՝ 44,3%-ը: Բացի Կապան քաղաքից, մնացած 8 քաղաքի բնակչության թիվը 2016 թ.-ին 1988 թ. համեմատությամբ նվազել է (աղյ. 3):

Աղյուսակ 3

ՀՀ սահմանամերձ քաղաքների մշտական բնակչության թվի շարժմանը (1988–2016 թթ.) [3–6]

Քաղաքներ	Բնակչության թիվն ըստ տարեթվերի			
	1988 թ.	2001 թ.	2011 թ.	2016 թ.
Ճամբարակ	6914	6405	5850	5715
Վարդենիս	13180	12753	12685	12579
Բերդ	10131	8810	7957	7746
Նոյեմբերյան	5768	5486	5310	4930
Կապան	42355	45711	43190	42640
Գորիս	22627	23261	20591	20342
Քաջարան	7995	8439	7163	7061
Մեղրի	4713	4805	4580	4542
Ագարակ	5530	4801	4429	4284
Ընդամենը ՀՀ-ում	119213	120471	111755	109839

ՀՀ-ում սահմանամերձ գոտու բնակավայրերից խոշորագույնը՝ Կապան քաղաքն է: Այստեղ, թեև 1988 թ.-ի համեմատությամբ բնակչության թիվը ավելացել է 0,7%-ով (285 մարդ), սակայն վերջին մեկուկես տասնամյակում (2001 թ.-ից հետո) ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող այս քաղաքի բնակչության թիվը նվազել է ավելի քան 3 հազարով կամ 6,7%-ով: Ընդհանուր առմամբ, սահմանամերձ գոտու քաղաքային բնակավայրերի մշտական բնակչության բացարձակ թիվը 1988–2016 թթ. ընթացքում նվազել է 9374-ով կամ 7,9%-ով:

ՀՀ սահմանամերձ շրջանների տարաբնակեցման համակարգում ավելի մեծ դեր ունեն գյուղական բնակավայրերը: Դրանց զարգացումից և առաջընթացից է կախված այդ շրջանների տնտեսության հիմնական ճյուղի՝ գյուղատնտեսության զարգացման մակարդակը, լեռնային և սահմանամերձ տարածքների լիարժեք օգտագործումը, ինչպես նաև բնակչության միգրացիայի կարգավորումը [7]: Սահմանամերձ գոտու բնակավայրերից 191-ը (95,5%-ը) գյուղական բնակավայրեր են, որոնց բաժին էր ընկնում գոտու ընդհանուր բնակչության 55,7%-ը: Ըստ վիճակագրական տվյալների վերլուծության՝

սահմանամերձ գոտու գյուղական բնակչության թվաքանակը 1988–2016 թթ. ընթացքում նվազել է ավելի քան 19 հազարով (12,1%-ով): Գոտու գյուղական բնակչության թվաքանակը նշված ժամանակաշրջանում նվազել է այստեղի քաղաքային բնակչության համեմատ առավել մեծ չափով թե՛ բացարձակ, թե՛ տոկոսային մեծությամբ: Բացարձակ թվով այդ տարբերությունը կազմում է ավելի քան 2 անգամ, իսկ տոկոսային մեծությամբ՝ 1,5 անգամ:

Աղյուսակ 4

ՀՀ սահմանամերձ գոտու գյուղական բնակավայրերի և բնակչության թվաքանակի շարժընթացը (1988–2016 թթ.) [3–6]

Մարզեր	1988 թ.			2001 թ.			2011 թ.			2016 թ.		
	N _գ *	N _բ	N̄ _բ	N _գ	N _բ	N̄ _բ	N _գ	N _բ	N̄ _բ	N _գ	N _բ	N̄ _բ
Արագածոտն	2	825	412	2	344	172	2	282	141	2	264	132
Արարատ	9	10266	1141	9	10211	1134	9	10474	1164	9	12080	1342
Արմավիր	8	9551	1194	8	11602	1450	8	10799	1350	8	13577	1697
Գեղարքունիք	21	27349	1302	20	10192	510	20	9559	478	20	9762	488
Լոռի	5	2753	551	5	1172	234	5	854	171	5	983	197
Շիրակ	16	9009	563	16	8617	539	18	7572	421	18	10106	561
Սյունիք	71	27313	385	71	26628	375	70	25085	358	70	24433	349
Տավուշ	45	60288	1340	45	69437	1543	45	57350	1274	45	58037	1290
Վայոց ձոր	13	9654	743	14	8748	625	14	7920	566	14	8725	623
Ընդամենը ՀՀ-ում	190	157008	826	190	146951	773	191	129895	680	191	137967	722

* N_գ՝ գյուղերի թիվը; N_բ՝ բնակչության թիվը; N̄_բ՝ միջին մարդաքանակը:

Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Շիրակի, Լոռու և Վայոց ձորի մարզերում սահմանամերձ գոտու բնակավայրերը միայն գյուղական են: ՀՀ սահմանամերձ գյուղական բնակավայրերի 70,1%-ը բաժին է ընկնում Գեղարքունիքի, Սյունիքի և Տավուշի մարզերին, որտեղ ապրում է գոտու գյուղական բնակչության 66,9%-ը (Տավուշում՝ 42,1, Սյունիքում՝ 17,7, Գեղարքունիքում՝ 7,1%-ը): 1988–2016 թթ. ընթացքում նշված մարզերի սահմանամերձ գյուղական բնակավայրերի բնակչության թիվը նվազել է ավելի քան 22700-ով կամ 19,7%-ով: Առավել մտահոգիչ է Գեղարքունիքի մարզի սահմանամերձ գոտու գյուղական բնակչության թվի նվազումը՝ 2,8 անգամ կամ 19,7%-ով: Այստեղ գյուղերի միջին մարդաքանակը 1988 թ. կազմում էր 1306, իսկ 2016 թ.՝ 488 մարդ (աղյ. 4):

Տավուշի մարզի սահմանամերձ գոտու գյուղական բնակավայրերում բնակչության բացարձակ թիվը 1988–2001 թթ. ընթացքում ավելացել է 9150-ով (15,2%-ով), իսկ հետագա մեկուկես տասնամյակում (2001–2016 թթ.)՝ նվազել է 11400-ով (16,4%-ով): Այստեղ գյուղերի միջին մարդաքանակը միայն վերջին մեկուկես տասնամյակում նվազել է 253-ով (1543-ից՝ 1290) (աղյ. 4):

Սյունիքի մարզի սահմանամերձ գոտու գյուղական բնակավայրերի բնակչության թիվը 1988–2016 թթ. նվազել է 2880-ով (8,3%-ով), իսկ գյուղերի միջին մարդաքանակը՝ 36-ով (այս ցուցանիշով Սյունիքը ՀՀ սահմանամերձ մարզերի միջին ցուցանիշին զիջում է ավելի քան երկու անգամ):

Առանձնակի կարևորություն ունի նաև քննարկվող ժամանակաշրջանում ՀՀ սահմանամերձ գոտու տարաբնակեցման գործընթացներում գյուղական բնակավայրերի մշտական բնակչության շարժընթացի վերլուծությունն ըստ մարդաշատության խմբերի: 1988 թ.-ին գոտու գյուղական բնակավայրերի շարքում 1001–2000 բնակիչ ունեցող բնակավայրերը ունեցել են առավել մեծ

բաժին (38,7%): Բնակչության թվով երկրորդ խումբը 501–1000 բնակչություն ունեցող գյուղերն էին (20,8%): Մինչև 100 բնակիչ ունեցող բնակավայրերի բաժինը կազմում էր 6,3%: Այստեղ ապրում էր ՀՀ սահմանամերձ գոտու գյուղական բնակչության ընդամենը 0,5%-ը (աղյ. 5):

Աղյուսակ 5

ՀՀ սահմանամերձ գոտու գյուղական բնակավայրերի և բնակչության թվի շարժմանը ըստ մարդաշատության խմբերի (1988–2016 թթ.) [3–6]

Տարիներ	Գյուղական բնակչության բաշխումն ըստ մարդաշատության խմբերի (մարդ)														Ընդամենը բնակչություն
	մինչև 100		101–200		201–500		501–1000		1001–2000		2001–3000		3001–5000		
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	
1988	12	738	28	4049	47	16465	44	32713	43	60819	9	22677	4	18692	157008
2001	15	833	32	4945	46	15493	40	28427	32	42136	10	23830	7	24943	146951
2011	29	1569	28	4266	43	13330	47	33594	24	32926	13	32159	3	11769	129895
2016	31	1693	27	3981	41	13076	45	32324	26	36684	11	31359	5	18586	137967

ա՝ բնակավայրերի թիվը; բ՝ բնակչության թվաքանակը:

1988–2016 թթ. ընթացքում ՀՀ սահմանամերձ գոտում մի կողմից տեղի է ունեցել 1001–2000 մարդ ունեցող գյուղական բնակավայրերի թվի նվազում, մյուս կողմից մանր՝ մինչև 100 բնակիչ ունեցող գյուղերի թվի ավելացում (աղյ. 5): Այդ միտումն առավել ընդգծվել է 2001–2011 թթ.-ին: Եթե 2001 թ.-ին ՀՀ սահմանամերձ գոտու գյուղական բնակչության թվաքանակում առավել մեծ բաժին (28,7%) ուներ 1001–2000 բնակիչ ունեցող բնակավայրերի խումբը, ապա 2011 թ.-ին 501–1000 (25,9%), 1001–2000 (25,3%) և 2001–3000 (24,7%) բնակիչ ունեցող բնակավայրերի խմբերն ունեցել են գրեթե հավասար մասնաբաժին գյուղական բնակչության ընդհանուր թվաքանակում:

Նույն այդ ժամանակահատվածում մինչև 100 բնակիչ ունեցող գյուղերի թիվը գրեթե կրկնապատկվել է՝ հասնելով սահմանամերձ գոտու գյուղերի ընդհանուր թվի 15,5%-ին, իսկ 2016 թ.՝ 16,6%: Այդ հանգամանքը լուրջ հիմնախնդիրներ է ստեղծում, քանի որ ՀՀ սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի զարգացման հայեցակարգային ծրագրի հիմնական սկզբունքներից մեկը սակավաթանկ բնակավայրերի ամրապնդումն է [8]:

Դիտարկված ժամանակահատվածում ՀՀ սահմանամերձ գոտու տարաբնակեցման կառուցվածքում տեղի ունեցած առավել հատկանշական փոփոխությունը 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերի թվի և դրանց բնակչության թվաքանակի կտրուկ նվազումն է: Եթե 1988 թ.-ին այդպիսիք 56-ն էին (29,5%), որտեղ ապրում էր սահմանամերձ գոտու գյուղական բնակչության 65,1%-ը, ապա 2016 թ.-ին այդպիսի գյուղերի թիվը նվազել է 14-ով և դրանց բաժին է ընկնում բնակչության 62,3%-ը: Ընդ որում, եթե հարաբերական մեծությամբ այդպիսի գյուղերի բնակչության մասնաբաժինը նվազել է ընդամենը 2,8 տոկոսային կետով (65,1-ից՝ 62,3), ապա բացարձակ ցուցանիշով այն կազմում է ավելի քան 15500 մարդ: Դա նշանակում է, որ հանրապետության սահմանամերձ գոտու գյուղական տարաբնակեցման մեջ առանցքային նշանակություն ունեցող բնակավայրերի խմբում (1000-ից ավելի մարդ ունեցող) բնակչության բացարձակ ցուցանիշը նվազել է 15,2%-ով:

Այսպիսով, ՀՀ սահմանամերձ տարածքներում 1988–2016 թթ. տարաբնակեցման (բնակչության և բնակավայրերի) շարժընթացի վերը նշված վերլուծության արդյունքները ամփոփելով, կարելի է եզրակացնել՝

1. վերջին մոտ երեք տասնամյակի ընթացքում ՀՀ սահմանամերձ տարածքներում տեղի է ունեցել ինչպես մշտական, այնպես էլ առկա բնակչության բացարձակ թվաքանակի նվազում;

2. բացառությամբ Արարատի, Արմավիրի և Շիրակի՝ ՀՀ սահմանամերձ մնացած մարզերում տեղի է ունեցել մշտական բնակչության բացարձակ թվի նվազում;

3. Ադրբեջանի հետ սահմանամերձ Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում միասին վերցրած բնակչության բացարձակ թիվը նվազել է ավելի քան 33 հազարով կամ 13,5%-ով;

4. Թուրքիայի հետ սահմանամերձ Արմավիրի և Շիրակի մարզերում թեև տեղի է ունեցել բնակչության բացարձակ թվի ավելացում, սակայն Շիրակի մարզի չորս գյուղերում բնակչության թիվը նվազել է;

5. Վրաստանի հետ սահմանամերձ Լոռու մարզի սահմանամերձ գոտու բնակավայրերի բնակչության բացարձակ թիվը 1988–2016թթ. նվազել է 2,8 անգամ;

6. 1988–2016 թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ սահմանամերձ գյուղական բնակչության թիվն ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական մեծությամբ ավելի մեծ չափով է նվազել քան քաղաքային բնակչության թիվը;

7. Հանրապետության սահմանամերձ տարածքներում 1988թ-ից հետո մի կողմից տեղի է ունեցել 1001–2000 մարդ ունեցող գյուղերի թվի նվազում, մյուս կողմից՝ մանր՝ մինչև 100 մարդ ունեցող գյուղերի թվի ավելացում;

8. ՀՀ սահմանամերձ տարածքների գյուղական տարաբնակեցման մեջ առանցքային նշանակություն ունեցող բնակավայրերի (1000-ից ավելի մարդ) խմբում բնակչության բացարձակ թիվը նվազել է ավելի քան 15%-ով;

9. ՀՀ սահմանամերձ տարածքներում տարաբնակեցման շարժընթացի առկա միտումները և դրանց պահպանումն առաջացնում են տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական և այլ բնույթի հիմնախնդիրներ (արդյունավետ չի օգտագործվում սահմանամերձ տարածքների ռեսուրսային ներուժը, խախտվում է բնակչության սեռատարիքային կառուցվածքը և վերարտադրության բնականոն ընթացքը), որոնք խոչընդոտում են այդ տարածքների սոցիալ-տնտեսական առաջընթացին;

10. ՀՀ կառավարության, մարզային, տարածաշրջանային և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետք է մշակվեն և իրականացվեն սահմանամերձ տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթ ծրագրեր, որոնց շնորհիվ պայմաններ կստեղծվեն նշված տարածքներում բնակչության թվի նվազումը կանխելու, ռեսուրսային ներուժն արդյունավետ օգտագործելու և երկրի պաշտպանունակությունն ամրապնդելու համար:

Ստացվել է՝ 17.02.2017

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Հայաստանի Հանրապետության օրենքը ՀՀ սահմանամերձ տարածաշրջանների զարգացման համալիր ծրագիրը հաստատելու մասին: Եր., 20.05.2002:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը ՀՀ սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին: Եր., 17.11.98, Նո. 173:

3. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016:
www.armstat.am
4. Պոտոսյան Ա. Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչությունը և բնակավայրերը: Եր., 2013:
5. Հայաստանի Հանրապետության 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ ցուցանիշները): Եր., 2003, 542 էջ:
6. ՀՀ առկա և մշտական բնակչության բաշխումն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և սեռի (մարդահամար 2011 թ.):
www.armstat.am
7. Պոտոսյան Ա., Պոտոսյան Վ. Տարաբնակեցման դերը ՀՀ լեռնային ու սահմանամերձ շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման և տարածքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման գործում, ՀՀ տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները: Հանրապետական գիտաժողովի նյութեր: Եր., 2015, էջ. 82–88:
8. ՀՀ կառավարության որոշումը Հայաստանի Հանրապետության սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի առաջնահերթ հիմնախնդիրների հայեցակարգային ծրագրի մասին: Եր., 21.04.99, Նո. 246:

В. А. ПОТОСЯН

ДИНАМИКА И АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ РАССЕЛЕНИЯ НА ПРИГРАНИЧНЫХ ТЕРРИТОРИЯХ РА

Резюме

В современных условиях и исходя из соображений стратегического характера особую важность приобретает социально-экономическое развитие приграничных территорий РА, что крайне необходимо в деле укрепления обороноспособности страны. В статье на основе анализа статистических данных выявлены тенденции динамики расселения (населения и поселений) на приграничных территориях РА за последние три десятилетия и возникшие в этой связи проблемы.

V. A. POTOSYAN

ACTUAL PROBLEMS AND SETTLEMENT DYNAMICS IN FRONTIER AREAS OF RA

Summary

Considering the modern conditions of RA socio-economic development and strategic reasons, socio-economic development of contiguous areas and strengthening the defensibility of the country has a special importance. Based on the analysis of statistical data, the tendencies of RA frontier areas settlement dynamics (of population and settlements) over the last 3 decades and the problems connected with those tendencies have been revealed in the article.